տագործումը, մեզ իրավունք է տալիս ասելու, որ եթե ոչ Հայաստանում, գեթ Կիլիկիայում «ձիավոր և ասպետ» տերմինները ունեցել են նույն նշանակությունը, ընդ որում ձիավոր տերմինն օգտագործվել է ասպետի իմաստով և ընդհակառակը։ Այսպիսով, Կիլիկիայի ասպետները որպես ազատանիին պատկանող դաս, կոչվել են ձիավոր կամ հեծելվոր տերմիններով, որոնք նման էին հին Հռոմի ordo equester կոչված ձիավոր դասին կամ միջնադարյան Եվրոպայի՝ գերմանական ritter, ռուսական рыцарь և ֆրանսիական chevalier դասերին։

Ասպետությունը միջնադարյան Եվրոպայում հանդես էր եկել երեք ասպեկտով։

ա) ֆեոդալական հողատիրության մի ձև, որպես ֆեոդալական մանր հողատիրություն, բ) անձնական արժանիք կամ հատկություն, գ) վարվելաձևերի մի կոմպլեքս, սիստեմ[35]։

«Ասպետության ծագումն ու զարգացումը,—գրում է Հ. Ս. Ստաբլը,—մի հարց է, որը դեռևս խորապես լուսաբանված չէ։ Թեպետև Ժ. Հ. Ռաունդը մեծ ջանքեր է թափել նրա ծագումը բացատրել Անգլիայի ֆեոդալական հասարակարգի յուրանձնահատկությամբ, սակայն նրա ծագումը միջնադարյան ֆեոդալական Եվրոպայի մասշտաբով մնում է մութ և չլուսաբանված։ Ասպետը ծագել է հեծելվոր, հեծյալ, ձիավոր բառերից»[36] եզրակացնում է Ստաբլը։ Ֆրանսիացի հետազոտող Դյուկանժը երեք դասերի է բաժանում միջնադարյան ֆեոդալական Ֆրանսիայի և Իսպանիայի հասարակությունը. Ա. բարոններ, Բ. ասպետներ, Գ. սեյիսներ կամ ձիավարժներ, գունդստաբլներ և մարշալներ։ Վերջիններս ռազմական առաջնորդներ և խոշոր հողատերեր էին, իսկ ասպետները միջին և մանր հողատերեր[37]։

Ֆ. Էնգելսը ասպետներին դասում է ստորին ազնվականության շարքը, նշելով, որ նրանք ազատ էին հարկերից, բայց մասնակցություն ունեին դրանց վայելելու մեջ։ Միաժամանակ նա ընդգծում է ասպետական հեծելազորի նշանակությունը. «Որպես մանր հողատիրություն, ասպետությունը արագ կերպով կործանվում էր»,—գրում է Էնգելսը[38]։

Կիլիկիայում ձիավորները՝ ասպետները պատկանում էին ազնվականության՝ ազատների դասին[39]։ Նրանց հիմնական մասը մանր և միջին հողատերեր էին, որոնք իրենց սոցիալ-տնտեսական վիճակով գրավում էին ֆեոդալական հիերարխիայի չորրորդ աստիճանը՝ թագավորից, մեծ իշխան-բերդատերերից և իշխան-բարոններից հետո։ Ձիավորների սոցիալ-իրավական վիճակի հիմքում ընկած էր Կիլիկիայի ֆեոդալական հասարակության իշխող դասակարգի սոցիալ-իրավական վիճակն արտահայտող «իմ վասալի վասալը՝ իմ վասալը չէ» սկզբունքը։ Այդ մասին Սմբատը գրում է. «Եւ զիշխանքն դատէ իշխանաց իշխան՝ իշխանաւքն և իրենց տեսուն. նոյնպէս և զազատքն՝

---

[35] Encyclopedia Britanica, London, 1946, Edition, Tome 6, p. 778.

[36] Նույն տեղում, էջ 779։

[37] Encyclopedia Britanica, 1946, Tome 6, p. 779.

[38] Ֆ. Էնգելս, Գյուղացիական պատերազմը Գերմանիայում, Երևան, 1940, էջ 31—32։

[39] Смбат Спарапет, Судебник, стр. 48, 82.